ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԻ

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Նիկոլ Աղբալյանը «Գ. Սունդուկյանի «Կտակը» հոդվածում գրում է. «*Դա պիտի լինի մի արձան, որ մշտապես ջատագովություն լինի հավատարմության և մշտական հանդիմանություն՝ ուրացության: Հավատարիմ լինել տված խոսքին, պարտքը ճանաչել – ահա բարձրագույն իդեալը, որ կուզեր մարմնացած տեսնել Սունդուկյանը իր ժողովրդի մեջ: Սա նշանակում է բարոյական վերածնություն և կորովի ժողովուրդ տեսնելու մի տենչ*»:

(0.5)

- **Ի՞նչ արձանի մասին է խոսքը:**

Պատասխան՝

Խոսքը Պեպոյի արձանի մասին է:

2. «*Մինչ դու գնացիր*
Եվ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար,
Ես ավերակացս ո՞ւմ թագավորեմ»:

(2)

- **Վիպական ո՞ր հերոսի խոսքերն են:** *(0.5)*
- **Ո՞րն է դրանց նախընթաց իրադարձությունը** *(1.5)*

Պատասխան՝

- *Արտավազդի*
- *Արտաշեսի մահվան ժամանակ, երբ շատերն են հոժարակամ սպանվում իրենց սիրելի թագավորի համար, և շատ կոտորածներ են լինում, Արտավազդը վրդովվում է և այդ խոսքերով դիմում հորը:*

3.Լեհերը, ռուսները, վրացիները տևական ժամանակ կիրառել են այդ օրենսգիրքը: Սուդանի հայ համայնքի համար այն գործուն է մինչ օրս:

(3)

- **Ո՞ւմ և ո՞ր օրենսգրքի մասին է խոսքը:** *(1.5)*
- **Ի՞նչ գիտես դրա հեղինակի մասին /անուն, դարաշրջան, այլ աշխատություններ/:** *(1.5)*

Պատասխան՝

- *Հայոց «Դատաստանագիրք» /«Գիրք դատաստանի»/*

12-րդ դարի գիտնական, օրենսդիր, հասարակական գործիչ Մխիթար Գոշը ծնվել է Գանձակում: Տարիներ անց հաստատվում է Գետիկ վանքում, հիմնում դպրոց, զբաղվում կրթական գործունեությամբ: Երբ երկրաշարժից ավերվում են Գետիկն ու մերձակա գյուղերը, Մխիթարը միաբանությանն ու գյուղացիներին հորդորում է չհեռանալ ուրիշ վայրեր: Նա Զաքարյան իշխանների օգնությամբ հին Գետիկից ոչ հեռու կառուցում է Նոր Գետիկ վանքը, իսկ մոտակայքում երկու գյուղ: Վանքը հիմնադրի անունով կոչվում է Գոշավանք:

- *Գրել է առակներ,աղոթքներ, մեկնություններ:*

4. *«Սահմանք քաջաց, զենք իւրեանց» (Քաջերի սահմանը իրենց զենքն է):*

(1.5)

- **Բացատրի՛ր թևավոր խոսքի փոխաբերական իմաստը:**

Պատասխան՝

Հաջողության չափը կախված է անհատի ընդունակություններից և ձգտումից:

5. Այն սկսվում է Ա-ով և ավարտվում Ք-ով:

(3)

- **Նշի՛ր առնվազն երկու օրինակ:** *(1)*
- **Ովքե՞ր են եղինակները:** *(1)*
- **Մեկնաբանիր Ա և Ք տառերի գաղափարական իմաստները:** *(1)*

Պատասխան՝

- *Այբուբեն, «Առավոտ լուսո», «Ողբք ի մահն Ջեւանշիրի մեծի իշխանին»*
- *Մեսրոպ Մաշտոց, Ներսես Շնորհալի, Դավթակ Քերթող*
- *Արարիչ /Արեգակ/- Քրիստոս*

6. Խ. Աբովյանը «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանում գրում է, որ Դոկտոր Աղաֆոն Սմբատյանին կարդալով վեպից մի հատված, վերջինիցս ստացել է քաջալերանք այն շարունակելու *«Նրա սուրբ բարեկամությանն եմ պարտական, որ մունջ լեզուս բաց արեց»:*

(3)

- **«Մունջ լեզուն բացվեց» արտահայտությունը վեպի ո՞ր դրվագում է ևս մեկ անգամ նշված:** *(1.5)*
- **Ո՞րն է դրա փոխաբերական իմաստը:** *(1.5)*

Պատասխան՝

- *Նշված է վեպի Առաջաբանում, երբ հեղինակը նկարագրում է, թե ինչպես հոր՝ Կրեսոս թագավորի մահվան վտանգը զգալով, 20 տարվա մունջ որդու լեզուն բացվում է, և նա բղավում է՝ «Անօրե՛ն, էդ ում ես սպանում, քաշի՛ր թուրդ ետ, չես տեսնում՝ որ առաջիդ Կրեսոս ա. Աշխարհքի տերն ա»:*
- *Հիմքում կյանքի ու մահվան սահմանին վճռական քայլ անելու անհրաժեշտության գաղափարն է: Մի դեպքում դա Հայ ազգի օրհասական վիճակն է և այն քաջալերանքը, որ ստացավ Աբովյանը իր բարեկամից, մյուս դեպքում՝ հոր մահն աչքի առաջ ունեցած զավակի քայլը:*

7.

- Ո՞րն է Ֆրիկի «Գանգատը» բանաստեղծության տողերում ամենից հաճախ օգտագործվող բառը:

Պատասխան՝

«Մեկն», «Մեկին»:

(1)

8.*...Երնեկ, թող այս Նոր տարին*
Հայ ազգն ի մի գումարվեր,
Ի գլուխ Կարնո հայ ամրին՝
Հայի դրոշակ ծածաներ:

*Հայեր, երբեք **չերկմտենք,***
Կկատարվի այս ամեն,-
Եթե իսպառ մենք հանենք
..... մեր սրտեն:

(1)

- Ի՞նչ բառ է բաց թողնված «Հայերուս բաղձանքը» երգում: /Ընդունելի է նաև ճիշտ պատասխանի հոմանիշը/:

Պատասխան՝ *Բաց թողնվածը «փոքրոգություն» բառն է: Ճիշտ կհամարվեն վախկոտություն, կասկածամտություն, երկչոտություն և այլ բառեր, որոնք տրամաբանորեն կապվում են «**չերկմտենք»-ին:***

9.Առասպելական և դյուցազներգական երկու հերոս մինչ օրս մեկուսացած են աշխարհից:

- **Ովքե՞ր են:** *(0.5)*
- **Ո՞վ որտե՞ղ է փակված:** *(1)*
- **Ո՞վ կամ ովքե՞ր և ինչպե՞ս էին հուշել նրանցից մեկին այդ «հասցեն»:** *(1.5)*
- **Ի՞նչ կլինի, եթե նրանք դուրս գան քարայրներից:** *(2)*

Պատասխան՝

- *Արտավազդ և Փոքր Միեր*
- *Արտավազդը՝ Մասսյաց վիհում, Փոքր Միերը՝ Ագռավաքարում*
- *Հերոսներից մեկին՝ Փոքր Միերին այդ «հասցեն» հուշել էին ծնողները: Մահացած ծնողների շիրմին այցելելով՝ Միերը լսում է ծնողների հորդորը. գնալ Վան՝ Ագռավու քար. «Քո տեղն էնտեղ է»:*
- *Եթե քարայրից դուրս գա Արտավազդը, ապա կկործանի աշխարհը՝ լուծելով իր վրեժը կրած տանջանքների համար: Դրա համար էլ դարբիններն անընդհատ ամրացնում են նրա շղթաները: Եթե դուրս գա Փոքր Միերը, ապա դա կլինի մեծ Ավետիս՝ նշան, որ աշխարհը վերափոխվել է և դարձել արդար:*